

«ՄՏԵՐԻԼ ՎԵՅՎ»
փակ բաժնետիրական ընկերություն

Երևանում կլինիկական և այլ օրգանական
թափոնների վնասագերծման
գործունեության

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն

Կատարող՝
«Քոնսեկոարդ» ՍՊԸ տնօրեն՝
Վ. Թևոսյան



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	4
2.	ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ.....	5
3.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅՂ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	8
3.1.	Ֆիզիկաաշխարհագրական և երկրաբանական պայմանները	8
3.2.	Կլիման	11
3.3.	Օդային ավազան	14
3.4.	Ջրային ռեսուրսներ	15
3.5.	Հողային ռեսուրսներ.....	16
3.6.	Կենսաբազմազանություն	17
3.7.	Բնության հատուկ պահպանվող տարածքներ	
3.8.	Սոցիալ-տնտեսական պայմանները.....	17
4.	ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՋՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ	19
4.1.	Ջրոյական տարբերակ	19
4.2.	Քննարկվող տարբերակներ	19
4.2.1.	Այրում.....	19
4.2.2.	Ջերմային վնասազերծում /ախտահանում/	20
4.2.3.	Ընտրության հիմնավորում	20
5.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	20
5.1.	Վնասազերծման ենթակա թափոնների բնութագրերը.....	20
5.2.	Կլինիկական թափոնների հետ վարման և դրանց գործածության ընդունված կարգը ...	21
5.3.	Թափոնների գործածության տեխնոլոգիական լուծումների նկարագրությունը.....	22
5.3.1.	Կլինիկական թափոնների ախտահանման հանգույց /սարք/.....	22
5.3.2.	Վնասազերծման կազմակերպում	23
6.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	25
6.1.	Ռիսկերի գնահատում.....	25
6.2.	Օդային ավազան.....	26
6.3.	Ջրօգտագործում և ջրահեռացում	26
6.4.	Արտադրական թափոններ	26
6.5.	Սանիտարապաշտպանիչ գոտի	27
6.6.	Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն	27
7.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ....	27
8.	ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՄԵՂՄԱՑՄԱՆՆ ՈՒ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	28
8.1.	Մթնոլորտային օդ.....	28
8.2.	Ջրային ռեսուրսներ.....	30
8.3.	Թափոններ.....	30
8.4.	Կլինիկական թափոնների հավաքմանը, ժամանակավոր պահմամը ներկայացվող	

պահանջներ.....	30
9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԵՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ԱՐՏԱԿԱՐԳ և ՎԹԱՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ.....	32
9.1. Արտակարգ իրավիճակներ.....	32
9.2. Մարդու առողջություն և անվտանգություն	33
10. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ.....	34
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	35
Հավելված 1.....	36
Նախատեսվող գործունեության իրականացման միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան.....	36
Հավելված 2. Մոնիթորինգի (մշտադիտարկում) պլան.....	40

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կլինիկական թափոնները կենսաբանական, ֆիզիկական, քիմիական վտանգ են ներկայացնում նրանց համար, ովքեր մասնակցում են թափոնների գործածության գործընթացին: Կլինիկական թափոնները սպառնում են հանրային առողջության անվտանգությանն այն դեպքում, երբ մարդիկ, այդ թվում երեխաները, շփվում են չմշակված թափոնների հետ: Հաշվի առնելով այս խնդրի կարևորությունը «Ստերիլ վեյվ» ՓԲԸ նախատեսում է կազմակերպել կլինիկական և այլ օրգանական թափոնների վնասազերծում ախտահանման և միկրոալիքային տեխնոլոգիա միջոցով: Այս եղանակը շահեկանորեն տարբերվում է այրման եղանակից, քանի որ գործնականում չունի ազդեցություն շրջակա միջավայրի վրա:

Կլինիկական թափոնների վնասազերծման նպատակներն են.

- 1) հիվանդներին և առողջապահական համակարգի աշխատողներին պաշտպանել բժշկական թափոնների հետ կապված վտանգներից,
- 2) հասարակությունը պաշտպանել բժշկական թափոնների հետ կապված վտանգներից,
- 3) պահպանել շրջակա միջավայրը:

Նախատեսվում է ձեռք բերել և տեղադրել երկու հատ BERTIN TECHNOLOGIES ֆրանսիական կազմակերպության (FRANCE-78180-MONTIGNY LE BRETONNEUX) արտադրության ստերիլիզատորներ, որոնք համապատասխանում են եվրոպական «EN 61010-1 “Safety requirements for electrical equipment for measurement, control and laboratory use – Part 1: General requirements” ստանդարտի պահանջներին:

Գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արցախի պողոտա, 4/50:

Սույն հաշվետվությունը կազմված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ կողմից 22.08.2022թ. ներկայացված SU52 տեխնիկական առաջադրանքի պահանջների հիման վրա:

Աշխատանքնում ներկայացված են տեղանքների բնակլիմայական և սոցիալական ելակետային տվյալները:

Հաշվետվությունում նկարագրված են գործունեության տեխնոլոգիական բնութագրերը, տեխնիկական միջոցները:

Դիտարկվել են այլընտրանքային տարբերակները, ներառյալ գրոյական տարբերակը:

Գնահատվել են նախատեսվող գործունեության բնապահպանական և սոցիալական ռիսկերը, որոնց վերլուծության արդյունքում մշակվել են բացասական ազդեցությունը կանխող կամ նվազեցնող միջոցառումներ:

Աշխատանքների պատշաճ կազմակերպման նպատակով մշակվել է բնապահպանական կառավարման պլան: Մշակված միջոցառումների արդյունավետությունը վերահսկելու համար ներկայացվել է մշտադիտարկումների (մոնիթորինգի) ծրագիր:

2. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

➤ ՀՀ Սահմանադրությունը (ընդունված 06.12.2015թ.) - 12-րդ հոդվածը «Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը» սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

➤ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (2014) - օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման «հայեցակարգերի» պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիաների՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման

ընթացակարգերը:

➤ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը (1994թ. հոկտեմբերի 11, ՀՕ-121) կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների հարցերը: Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման, ինչպես նաև մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման և հաստատման վերաբերյալ հարցերը կարգավորվում են օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերով՝ Կառավարության 22.04.1999 թվականի N259 և 27.12.2012 թվականի N1673-Ն որոշումներով):

➤ «ՀՀ հողային օրենսգիրքը» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

➤ «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարություն 30 հունվարի 2003 թվականի N 121-Ն որոշումը և ՀՀ կառավարության 27 սեպտեմբերի 2018 թվականի N 1029-Ն որոշում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 121-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին, որով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը:

➤ ՀՀ Կառավարության որոշումը N 121-Ն - Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), որը պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

➤ «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենք (07.02.2012թ.) - օրենսդրության խնդիրն է պահպանել քաղաքացիների սոցիալ-տնտեսական, քաղաքական և անձնական իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների իրավունքներն ու օրինական շահերը, կառավարման սահմանված կարգը, պետական և հասարակական կարգը:

- «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:
- Բնապահպանական որակի ստանդարտներ, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար:
- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման «Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին»,
- Բնապահպանական որակի ստանդարտներ, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար:
- Հ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ «ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԹՐԹՌՄԱՆ (ՎԻԲՐԱՑԻԱՑԻ) ՀԻԳԻԵՆԻԿ ՆՈՐՄԵՐԸ» ՀՆ N 2.2.4-009-06 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
- N2-III-11.3՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» սանիտարական նորմեր,
 - 1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման «Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին»,
 - ՀՀ առողջապահության նախարարի 4 մարտի 2008 թ. N 03-Ն հրաման «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին:
 - ՀՀ Ջրային օրենսգիրքը (04.6.2002թ.),
 - «Թափոնների մասին» ՀՀ օրենքը (24.11.2004 թ.),
 - «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),
 - «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),
 - «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),
 - ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,
 - ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,

➤ ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,

➤ ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,

➤ «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշումը;

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված դասակարգումների, նախատեսվող գործունեությունը դասվում է «Ա» կատեգորիայի և ենթակա է փորձաքննության՝ երկու փուլերով:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

3.1. Ֆիզիկաաշխարհագրական և երկրաբանական պայմանները

«Ստերիլվելյ» ՓԲԸ ձեռնարկվող կլինիկական և այլ օրգանական թափոնների վնասազերծման գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի արտադրական գոտում՝ Արցախի պողոտա, 4/50 հասցեում, արտադրական շինությունում: Այդ նպատակով «Կաթսաէներգումնտաժ» ԲԲԸ արտադրական տարածքում վարձակալվել է շինություն, որը ապահովված է ջրամատակարարման, ջրահեռացման և էլեկտրամատակարարման ենթակառուցվածքներով: Տեղանքի ռելիեֆը հանգիստ է:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենիցմինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

3.2 Գեոմորֆոլոգիա

Ներկայացվող տեղանքը գեոմորֆոլոգիական տեսակետից ունի հարթ, որոշակի թեքությամբ ռելիեֆային բնույթ:

Լիթոլոգիական տեսակետից տարածքում կարելի է առանձնացնել հետևյալ երկրաբանական տարբերակները՝

1. Ժամանակակից այրուվիալ-պրոյուվիալ գրունտեր, ներկայացված գորշ կավավազով՝ ամուր կազմության, փթած բույսերի մնացորդներով և արմատներով:
2. Մանրախճային գրունտ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և

կավային լցանյութով մինչև 30-35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

3. Մեծաբեկորային գրունտ, խճի և մանրախճի խառնուրդով, քարակտորների արանքները լցված են մինչև 10% կավավազային և ավազային լցանյութով: Քարակտորները ներկայացված են հրաբխային ապարներով:

4. Վերին չորորդական լճա-ալյուվիալ նստվածքներ, ներկայացված խճամանրախճային գրունտներով՝ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30 -35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

Տարածքում սողանքային երևույթներ չեն դիտարկվել:

3.3 Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը ոչ բարենպաստ է սեյսմիկ ազդեցության ժամանակ: Ստորգետնյա ջրերը կապված են միջլավային և լավաների տակ գտնվող հոսքերի հետ, ունեն ինֆիլտրացիոն բնույթ:

Գրունտային ջրերի առկայությունը կավային գրունտներում բացատրվում է ջրհագեցած ավազների բազմաթիվ ենթաշերտերով և ոսպնյակների առկայությամբ, որը հանգեցրել է ստորգետնյա ջրերի ցիրկուլիացիայի բարդ պայմանների և ջրատար հորիզոնների առկայության:

Աշխատանքների տեղանքում գրունտային/ստորգետնյա ջրերի մակարդակը կազմում է 2 – 6 մ:

ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն Շինարարություն Նախագծման Նորմեր» նորմատիվային փաստաթղթում ներկայացված սեյսմիկ գոտեվորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը:

Ստորև բերված է տարածքի իրադրային սխեման:



Նկար 1. Իրադրային սխեմա

3.2 Կլիման

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժմամբ: Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան -30°C , բացարձակ մաքսիմումը հասնում է $+42^{\circ}\text{C}$: Օդի միջին ջերմաստիճանները՝ ըստ ամիսների, Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար, բերված են աղյուսակ 3.1-ում «Շինարարական կլիմատոլոգիա» СНиП II-7.01-96 տվյալների համաձայն:

Երևանի կլիման աչքի է ընկնում չորայնությամբ: Գարնան ամիսներին (մարտ –մայիս) դիտվում են մինչև 150 մմ տեղումներ, հունիս – սեպտեմբեր ամիսները խիստ չորային են՝ մինչև 64 մմ: Տեղումների տարեկան քանակը տատանվում է 286 մինչև 353 մմ: Ամռանն օդի հարաբերական խոնավությունը կազմում է 49% – 53%, ձմռանը՝ 73% - 76%, զարնանը՝ 57% – 61% և աշնանը՝ 51% – 70%:

Ձմռան ամիսներին հաճախակի դիտվում են հանդարտ և թույլ քամիներով եղանակներ, ինչը ռելիեֆի գոգավորության պայմաններում նպաստում է սառը օդի լճացմանը: Հունվար ամսին հանդարտ օրերի թիվը կարող է կազմել 45% – 75%:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների:
Երևանի տարածաշրջամի օդերևութաբանական հիմնական պարամետրերը տրված են ստորև:

Աղյուսակ 3.1.

Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Օդերև- ութաբ. կայանը	Բարձրությունը ծովի մակար- դակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարե- կան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելա- գույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Էրեբունի	888	-3.6	-1.0	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9	-2.8	42

Աղյուսակ 3.2.

Օդի հարաբերական խոնավությունը

Օդերև- ութաբ. կայանը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Էրեբունի	888	79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79	61	67	28

Աղյուսակ 3.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Ձնածածկույթը, մմ	
	Ըստ ամիսների													Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը, մմ	Տարվա ձնածածկույթի օրերը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Էրեբունի	24	23	32	35	45	23	11	8	12	29	28	21	291	58	47
	24	23	34	29	42	34	29	37	51	35	36	28	51		

Աղյուսակ 3.4. Քանու պարամետրերը

1	2	3	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների									12	13	14	15	16	17	18	
			4	5	6	7	8	9	10	11									
Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ձնշում, (հՊա)	Ամիսներ	Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)	Անհորմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (15մ/վ օրերի քանակը)	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ"ն"	20	50	100	
Էրեբունի	912.1	Հունվար	4	9	11	14	21	25	12	4	76	0.7	1.5	29	22	27	29		
			2.2	2.2	2.2	2.9	2.7	2.3	2.6	2.7									
		Ապրիլ	7	14	8	16	20	16	13	6	45	1.9							
			3.1	3.2	2.8	4.0	3.1	3.0	3.8	3.6									
		Հուլիս	17	28	4	9	17	13	8	4	36	2.8							
			5.2	5.7	2.8	2.7	2.4	2.7	2.9	4.3									
		Հոկտեմբեր	6	17	10	10	21	20	10	5	63	1,0							
			2,9	2,5	2,1	2,5	2,3	2,4	2,9	3,5									

3.3. Օդային ավազան

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

Երևան քաղաքում գործում է 45 դիտակետ եւ 5 դիտակայան: Որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի եւ գետնամերձ օզոնի պարունակությունները: Փոշու որոշ փորձանմուշներում որոշվել են մետաղների պարունակությունը, որոնց ամսական և տարեկան միջին կոնցենտրացիաները բերված են գրաֆիկների տեսքով: 2021թ. քաղաքի մթնոլորտի աղտոտվածությունը (ըստ մթնոլորտի աղտոտող 4 նյութերի) միջինից ցածր մակարդակի է՝ մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը (ՄԱՑ) 2.14 է (փոշի՝ 1.15, ծծմբի երկօքսիդ՝ 0.34, ազոտի երկօքսիդ՝ 0.61, գետնամերձ օզոն՝ 0.05):

Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է ծծմբի երկօքսիդի եւ գետնամերձ օզոնի կոնցենտրացիաների նվազման, իսկ փոշու եւ ազոտի երկօքսիդի՝ աճման տեղեկաց:

2021 թվականին Երևան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշներից փոշու միջին տարեկան կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն

1.1 անգամ: Մնացած ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Իրականացված դիտարկումների 29%-ում դիտվել են փոշու, 13%-ում՝ ծծմբի երկօքսիդի, 0.4%-ում՝ ազոտի երկօքսիդի, 1%-ում՝ գետնամերձ օզոնի համապատասխան ՍԹԿ-ներից գերազանցումներ, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես բնակլիմայական պայմաններով եւ աղտոտման աղբյուրներով, այնպես էլ կանաչ տարածքների սակավությամբ: Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:

Աղյուսակ 3.5. Երևան քաղաքի մթնոլորտային օդի դիտարկումների արդյունքները, 2021թ.

Որոշվող միացություն	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³ (դիտակայանի համար)	Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ ³	ՍԹԿ միջին օրական, մգ/մ ³
Ծծմբի երկօքսիդ	0.059 (դիտ. N2)	0.017	0.05
Ազոտի երկօքսիդ	0.910 (դիտ. N7)	0.027	0.04
Փոշի	2.076 (դիտ. N1)	0.172	0.15
Գետնամերձ օզոն	0.095 (դիտ. N8)	0.005	0.03

3.4. Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից: ՀՀ կառավարության կողմից՝ «Կախված տեղանքի առանձնահատկություններից, յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75 Ն որոշում): ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արվիա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 131 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական՝ մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք (ՋԿՏ)

Հրազդանի ՋԿՏ-ը ներառում է Հրազդանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ- կենցաղային կեղտաջրերը:

2020 թվականին Հրազդանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 20 դիտակետում, որոնցից 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 25%-ում՝ 3-րդ դաս, 15%-ում՝ 4-րդ դաս և 50%-ում՝ 5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2020 թվականին ջրի որակի էական փոփոխություն չի նկատվել: Աղտոտված գետերից են Քասախը, Գեղարոտը, Հրազդանը և Գետառը:

Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով, մանգանով, նատրիումով և բորով: Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արգնի ՀԷԿ-ից ներքև, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի

և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, ամոնիում, ֆոսֆատ իոններով, մանգանով, վանադիումով, կալիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով և վանադիումով: Նախատեսվող տարածքի հեռավորությունը Հրազդան գետի մոտակա հատվածից կազմում է 4.1 կմ:

3.5. Հողային ռեսուրսներ

Դիտարկվող տարածքում հողերի ձևավորման պրոցեսն ընթանում է հրաբխային ապարների՝ բազալտների, տուֆերի, հողմահարման նյութերի վրա: Նրանց վրա ձևավորվում են բաց գորշագույն հողեր: Հողերը հիմնականում ունեն կավավազային կամ ավազակավային մեխանիկական կազմ:

Չոր կլիման և աղքատ բուսական ծածկը պայմանավորում են հողային պրոֆիլի բաժանվածությունը հորիզոնների և օրգանական նյութերով թույլ հագեցվածությունը: Նույնիսկ հողի ամենավերին հորիզոններում թույլ հիմնային ռեակցիայի պայմաններում հումուսի քանակը այդպիսի հողերում 1 %-ից չի անցնում:

Ամռանը հողի մակերևույթը սովորաբար տաքանում է մինչև 50°C, իսկ առանձին դեպքերում՝ մինչև 54°C: Ձմռանը սառչում է միջին հաշվով 2-3 սմ խորությամբ, առանձին տարիներին կարող է սառել մինչև 35սմ: Ամռանը հողն ուժեղ չորանում է և ճաքճքում: Այսպիսի պայմաններում բույսերի աճեցնելն առանց արհեստական ոռոգման գործնականորեն անհնար է:

Համաձայն Երևանի գլխավոր հատակագծի, քաղաքի տարածքը աղտոտված է ծանր մետաղներով և մասամբ՝ ռադիոնուկլիդներով: Ըստ ծանր մետաղներով աղտոտվածության, քաղաքի տարածքը ներկայումս վերագրվում է միջին աղտոտվածության տարածքներին: Մակայն քաղաքի տարածքում առանձնանում են նաևուժեղ աղտոտված տարածքներ: Անմիջապես գործունեության համար նախատեսվող տարածքը կառուցապատված է արտադրական բնույթի մասնաշենքով, առկա է նաև կանաչ գոտի: Ներկա պահին տարածքում արտադրական գործունեություն չի իրականացվում և տարածքի հողային ծածկույթը աղտոտված չէ արտադրական վտանգավոր հոսքերով կամ թափոններով:

3.6. Կենսաբազմազանություն

Ներկայացվող տեղանքը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանում, անապատային-կիսաանապատային գոտում:

Այս տարածքում հանդիպող բուսականության տեսակներն են՝ Մատիտեղ /երկու տեսակ, որոնցից մեկի սերմերի պատիճը ուլունքաշար է, մյուսինը՝ փնջով լոբի/, ուղտափուշ պարսկական, երկտերև, օշինդր, Կապար փշոտ, Իշառվույտ, կովի առվույտ:

Այս տարածքում հացազգիներից գերակշռում է կծմախոտը, կա անապատային սեզ: Կենդանիներից Երևանի տարածաշրջանում հանդիպում են.

Ողնաշարավորներից, լճագորտ, մողես, սովորական լորտու, տնային ճնճղուկ, մոխրագույն ազոավ, կաչաղակ, սովորական և հասարակական դաշտամուկ, մոխրագույն առնետ, Անողնաշարավորներից՝ անձրևաորդ, մրջյուն, մեղու, ծղրիդ, ճռիկ, մորեխ, փայտոջիլ, կապտաթիթեռ, մոծակ, սենյակային և դաշտային ճանճեր:

Թռչուններ՝ կոնչան բադ, եղեգնահավ, լոր, թխակապույտ աղավնի, կտցարներ:

Նախատեսվող գարծունեությունը իրականացվելու է Շենգավիթ վարչական շրջանի արտադրական գոտում՝ Արցախի պողոտա 4/50 հասցեում, և որևէ առնչություն չի կարող ունենալ կենսաբազմազանության հետ:

3.7. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Գործունեության տարածքին կից և Շենգավիթ վարչական շրջանում պետական արգելոցներ, արգելավայրեր և ազգային պարկեր չկան: Տարածքից մոտ 5.5 կմ հեռավորության վրա գտնվում է «Ջրվեժ» անտառպարկը, որը պատկանում է «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ին: Այն բնապահպանական, գիտահետազոտական և գիտաճանաչողական կազմակերպություն է, կազմավորվել է ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 18- ի թիվ 1046-Ն որոշմամբ: Համալիրը զբաղեցնում է 23449.6հա տարածք: «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի կազմի մեջ են մտնում «Էրեբունի» պետական արգելոցը, «Որդան կարմիր» պետական արգելավայրը, «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրը, «Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրը, Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկը, Բերդի «Սորաննե» դենդրոպարկը, Իջևանի «Դենդրոպարկ»-ը, Վանաձորի «Սարուխանյան Ժ.-ի անվան» դենդրոպարկերը, «Ջրվեժ» անտառպարկը:

«Ջրվեժ» անտառպարկը հիմնադրվել է 1977 թվականին՝ պետական անտառային ֆոնդի տարածքում: Այն գտնվում է Կոտայքի մարզի Աբովյանի տարածաշրջանում, Երևան-Գառնի մայրուղու աջակողմյան հատվածում՝ 1400մ բարձրության վրա: Սահմանակցում է Ողջաբերդ, Ջրվեժ համայնքներին և Երևան քաղաքին: «Ջրվեժ» անտառպարկի ստեղծման նպատակն էր Երևան քաղաքի էկոլոգիական վիճակի առողջացումը, բնական միջավայրում

մարդկանց հանգստի, մշակութային գեղագիտական պահանջների բավարարումը, նպաստելով արհեստական պայմաններում աճեցված տեղական և 100-ից ավելի ներմուծված ծառաթփային տեսակների (եղևնի կովկասյան, սոճի դրիմյան, խեժափիճի սիբիրական, թույա արևմտյանն այլն), պարտեզային ձևերի և դարավանադավորված տեղանքի հետ համադրվող տնտեսական, գեղագարդային և գիտական նշանակություն ունեցող պարկաշինության եզակի նմուշների պահպանությանը, վերարտադրությանը, ինչպես նաև նրանց էկոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Միաժամանակ անտառպարկը կնպաստի ընտրված և կլիմայավարժեցված լավագույն տեսակների ներդրմանը՝ կանաչ շինարարության տարբեր բնագավառներում: Երեք տասնամյակի ընթացքում ստեղծվել է մայրաքաղաքին մոտ գտնվող գեղագարդ տարածք:

1990-ական թվականների տնտեսական և էներգետիկ ճգնաժամը իր ազդեցությունն է թողել անտառպարկի վրա, որի պատճառով ներկայումս այն գտնվում է ոչ բարվոք վիճակում, կարիք ունի վերականգնման և վերակառուցման աշխատանքների:

«Արգելոցապարկային համալիրի» մեջ մտնող «Էրեբունի» պետական արգելոցը գործունեության տարածքից գտնվում է 4,5կմ դեպի հյուսիս:

Համաձայն ՀՀ Կառավարության 14. 08.2008թ. N967-Ն որոշմամբ ամրագրված բնության հուշարձանների ցանկի՝ գործունեության տարածքում և Շենգավիթ վարչական շրջանում բնության հուշարձաններ չկան: Նախատեսվող գործունեության տարածքից 3,8 կմ դեպի արևելք Ողջաբերդ համայնքին կից գտնվում է «Ողջաբերդ» բնապահպանական համալիրը:

3.8 Սոցիալ-տնտեսական պայմանները

«Ստերիլվեյվ» ՓԲԸ կլինիկական և այլ օրգանական թափոնների վնասազերծման գործունեությունն իրականացվելու է Շենգավիթ վարչական շրջանի արդյունաբերական գոտում:

Ներկայացվող գործունեության ազդակիր համայնք է հանդիսանում Երևանքաղաքը: Երևանի¹ տարածքը կազմում է 223 քկմ, բնակչությունը՝ 1075.1 հազ. մարդ:

Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիսարևելյան մասում, Հրազդան գետի երկու ափերին՝ ծովի մակերևույթից 900-1200 մետր բարձրության վրա:

Քաղաքի կլիման խիստ ցամաքային է՝ շոգ ու չոր ամառ և համեմատաբար խստաշունչ ձմեռ:

Երևանը վարչական սահմանով հարում է Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերին:

¹ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայք

Երևանը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք- Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ):

Երևանում են գտնվում ՀՀ Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, դրամատների ու սակարանների (բորսաների) ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը:

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Ընդհանուր առմամբ քաղաքի դիտարկվող վարչական շրջանում տեղ են գտել բազմազան հողօգտագործման ձևեր՝ բնակելի կառուցապատում, արդյունաբերական արտադրության համար նախատեսված գոտիներ, հատուկ նշանակության հողեր, կոմերցիոն բնույթի օբյեկտներով կառուցապատված գոտի, բուժառողջարարական հաստատություններ, ուսումնական հատուկ նշանակության օբյեկտներ և այլն:

Շենգավիթ վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա և Նուբարաշեն վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Արարատի մարզին:

Տարածքը՝ 4060 հա

Բնակչությունը՝ 141 900 մարդ²:

² <https://armstat.am>

4. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

4.1. *Զրոյական տարբերակ*

Զրոյական կամ առանց գործողության տարբերակ նշանակում է, որ որևէ փոփոխություն տեղի չի ունենում և տեղում կլինիկական թափոնների վնասազերծում չի իրականացվում: Այս դեպքում՝

- կլինիկական թափոնների վնասազերծման գործընթացի արդյունքում բնապահպանական և սոցիալական ազդեցության հետ կապված ռիսկեր կամ վտանգներ չեն առաջանա,
- կենսամիջավայրի վրա լրացուցիչ տեխնածին ներգործություն և ճնշում չի առաջանա:
Մյուս կողմից զրոյական տարբերակի ընտրության դեպքում չեն իրականանա նաև մի շարք հնարավորություններ, այդ թվում.
 - առաջացած կլինիկական թափոնների մի մասը առանց վնասազերծման կտեղափոխվեն Երևանի քաղաքային աղբավայր, որը չի կարող ապահովել թափոնների անվտանգ տեղակայում, կամ պետք է տեղափոխվեն Էջմիածին քաղաքում գործող կիզարան: Նման տեղափոխումը իր մեջ վտանգ է պարունակում, կապված տեղափոխման անվտանգության, ինչպես նաև տրանսպորտային լրացուցիչ շարժի, որը իր հերթին արտանետումների և աղմուկի աղբյուր է:
 - Նախագծի իրականացման ընթացքում նոր աշխատատեղերի ստեղծման և դրա արդյունքում տեղի բնակչության եկամուտների ավելացման հետ կապված հնարավորությունները:

4.2. *Քննարկվող տարբերակներ*

4.2.1. *Այրում*

Համաշխարհային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առավել տարածված վնասազերծման միջոցը թափոնների այրումն է:

Այս տարբերակի առավելություններն են.

- Թափոնների արագ և լիարժեք ոչնչացում
- Թափոնների երկարատև պահեստավորման բացառում
- Թափոնների տեղափոխման անհրաժեշտության բացառում:

Տարբերակի թերությունները.

- Այրման գործընթացը նույնպես վտանգ է ներկայացնում շրջակա միջավայրի վրա, քանի որ առաջանում են վնասակար նյութերի արտանետումներ,
- Բարձր ջերմային ռեժիմում աշխատանքի անվտանգության խնդիրներ:

4.2.2. Ջերմային վնասագերծում /ախտահանում/

Վարակիչ թափոնների վնասագերծման առավել տարածված եղանակը ջերմային ախտահանումն է: Այն հիմնականում իրականացվում 120 – 130°C պայմաններում, սուր շոգու միջոցով:

Այս տարբերակի առավելություններն են.

- Ցածր ծախսայնություն
- Թափոնների երկարատև պահեստավորման բացառում
- Վերամշակման անվտանգ պայմաններ:

Տարբերակի թերությունները.

- Ոչ բոլոր թափոնները կարելի է վնասագերծել ախտահանման միջոցով:

4.2.3. Ընտրության հիմնավորում

Քննարկելով բոլոր դրական և բացասական կողմերը ընտրվել է այդ վերը բերված երկրորդ տարբերակը:

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5.1. Վնասագերծման ենթակա թափոնների բնութագրերը

Բժշկական թափոնները, կազմակերպություններում պացիենտների հետազոտության, բուժման, բուժկանխարգելիչ աշխատանքների կամ գիտական հետազոտությունների արդյունքում առաջացած թափոններ են, որոնք բաժանվում են`

- 1) վարակիչ թափոնների, որոնք իրենց հերթին դասակարգվում են`

ա. միկրոկենսաբանական թափոններ

բ. ախտաբանաանատոմիական թափոններգ.

կենսաբանական հեղուկներ

դ. սրածայր թափոններ

2) քիմիական թափոններ - ախտորոշիչ և օգտագործման ոչ ենթակա քիմիական նյութեր, ինչպես նաև մաքրման, ախտահանման և այլ գործընթացների ընթացքում առաջացող նյութեր, որոնք ունեն թունավոր, քայքայիչ, դյուրավատ հատկություններ

3) դեղագործական թափոններ - ժամկետանց և օգտագործման համար ոչ պիտանի դեղեր, պատվաստանյութեր, շիճուկներ և դեղագործական այլ ապրանքներ:

Նշված թափոնները դասվում են վտանգավոր թափոնների շարքին, ուստի դրանց վնասազերծման գործունեությամբ զբաղվելը ենթակա է լիցենզավորման, որն իրականացնում է ՀՀ կառավարությունը՝ փորձաքննական եզրակացության հիման վրա:

Նշված թափոնատեսակներից ներկայացվող ստերիլիզատորները վնասազերծում են առաջին խմբի թափոնները՝ բացառվելու է քիմիական և դեղագործական թափոնների վնասազերծումը ստերիլիզատորում

Նախատեսվող բժշկական թափոնների վնասազերծման գործունեությունն ունի իր կարևորությունը՝ ինչպես բնապահպանական, այնպես էլ առողջապահական տեսանկյունից, քանի որ վերջինիս իրականացումը կարող է նպաստել վտանգավոր թափոնների հեռացման և տեղադրման հետ կապված շրջակա միջավայրի վրա ազդեցության և մարդու առողջության հետ կապված հիմնախնդիրների լուծմանը:

5.2. Կլինիկական թափոնների հետ վարման և դրանց գործածության ընդունված կարգը Կլինիկական թափոնների սխալ գործածությունը կարող է ուղղակի կամ անուղղակի բացասական ազդեցություն ունենալ հիվանդների, առողջապահության համակարգի աշխատողների և շրջակա միջավայրի վրա: Վտանգավոր բժշկական թափոնները վտանգ են սպառնում հանրային առողջության անվտանգությանն այն դեպքում, երբ մարդիկ, այդթվում երեխաները, շփվում են չմշակված թափոնների հետ:

Նախատեսվող գործունեության /Կլինիկական թափոնների վնասազերծում/ հետ կապված բնապահպանական ռիսկերը հիմնականում պայմանավորված են վնասազերծման ենթակա վտանգավոր բժշկական թափոնների հնարավոր ազդեցություններով՝ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա:

Առողջապահական և այլ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում առաջացած վտանգավոր բժշկական թափոնների (բացառությամբ՝ բժշկական ռադիոակտիվ թափոնների) անվտանգ գործածությունը, գոյացման կանխարգելումը, հավաքումը, ժամանակավոր պահումը, վնասազերծումը, ոչնչացումը, փոխադրումը և թաղումը կարգավորվում են ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ «ԲԺՇԿԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ» N 2.1.3-3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՐԱՄԱՆՈՎ:

Կազմակերպությունների անձնակազմերին ներկայացվող ընդհանուր պահանջները կարգավորվում են նշված հրամանով հաստատված հավելվածներով /Վարակիչ բժշկական թափոնների ախտահանման/վարակազերծման եղանակը և պայմանները կարգավորվում են նշված հրամանի հավելված 2-ի համաձայն/:

Վերամշակման ենթակա թափոնների տեսակները և քանակը սահմանվում են կազմակերպության բժշկական թափոնների գործածության Ակտով, որով կարգավորվում են բժշկական թափոնների գործածության՝ ներառյալ դրանց ըստ տեսակի առանձնացման, տարողությունների և բեռնարկերի մեջ տեղադրման, մեկուսացման, տեղափոխման և ընդունման, վնասազերծման և վարակազերծման բոլոր փուլերի իրականացումը նկարագրող ընթացակարգերը, դրանց կատարման ժամանակացույցը, վնասազերծման արդյունքում ստացված թափոնի հեռացման, թաղման և/կամ հետագա օգտագործման կարգը: Վերամշակման նպատակով բժշկական թափոններն այլ կազմակերպություններին պետք է տրամադրվեն այնպես, որպեսզի բացառվի դրանց կրկնակի օգտագործումը բժշկական նպատակներով: Արգելվում է բժշկական թափոնների բեռնաթափումը բաց աղբավայրերի մակերեսներին:

Բժշկական թափոնների գործածությունը կարգավորելու և դրա հետ կապված մարդու առողջության անվտանգության պահանջները ապահովելու նպատակով գործող սանիտարական կանոնների պահանջների հիման վրա յուրաքանչյուր կազմակերպության տնօրեն ընդունում է բժշկական թափոնների անվտանգ գործածությունը կարգավորող գործողությունների իրավական ակտ (այսուհետ՝ Ակտ): Բժշկական թափոնների գործածության ակտը իրենից ներկայացնում է փաստաթուղթ, որը նկարագրում է կազմակերպության գործառույթները՝ թափոնների գոյացումից մինչև հեռացում:

5.3. Թափոնների գործածության տեխնոլոգիական լուծումների նկարագրությունը

5.3.1. Կլինիկական թափոնների ախտահանման հանգույց /սարք/

Նախատեսվում է ձեռք բերել և տեղադրել երկու հատ BERTIN TECHNOLOGIES ֆրանսիական կազմակերպության (FRANCE - 78180 - MONTIGNY LE BRETONNEUX) արտադրության Sterilwave 440 տեսակի ստերիլիզատորներ, որոնք համապատասխանում են եվրոպական «EN 61010-1 “Safety requirements for electrical equipment for measurement, control and laboratory use – Part 1: General requirements”» ստանդարտի պահանջներին:

Գործունեությունը նախատեսվում է կազմակերպել Երևան քաղաքի ամենախոշոր՝ հարավային արդյունաբերական գոտում՝ Արցախի 4/50 հասցեում: Շրջակայքում առկա են

միայն արտադրական և պահեստային տարածքներ: Մոտակա բնակելի թաղամասը՝ Նորագավիթը, գտնվում է ավելի քան 1600 մ հեռավորության վրա:

Sterilwave 440 ստերիլիզատորների մոդելը հաստատվել է Ֆրանսիայի Առողջապահության նախարարության կողմից 2012 թվականին և թույլ է տալիս խոշոր հիվանդանոցներին և աղբահանող ընկերություններին, լիարժեք անվտանգ պայմաններում վնասազերծել կենսաբժշկական թափոններ՝ ժամում մինչև 88 կգ:

Սարքի նորարարական հայեցակարգն օգտագործում է կախովի անոթ և պտտվող աղաց շեղբեր՝ բոլոր տեսակի թափոնները մանրացնելու համար: Կենսավտանգավոր թափոնները մանրեզերծվում են միկրոալիքային խցի միջոցով, մինչ այդ ջարդիչ/մանրացնող հատվածում վերածվում մանր իներտ կենցաղային թափոնների՝ նվազեցնելով դրանց ծավալը ավելի քան 80%-ով, իսկ քաշը՝ 25%-ով: Սարքը թույլ է տալիս նվազեցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունը, շահագործման ծախսերը կրճատվում են՝ միաժամանակ ապահովելով օպերատորի անվտանգությունը: Քանի որ օգտագործվում է միկրոալիքային տեխնոլոգիա, Sterilwave-440-ը շոգու գեներատորի կարիք չունի, ուստի ավելորդ ճնշումից վտանգ չկա և հեղուկ արտահոսք չի արտադրվում: Դրա հեշտ տեղադրումը պահանջում է ընդամենը 20 մ² տարածք՝ մեծ քանակությամբ կենսաբանական թափոնների անվտանգ մշակման համար:

5.3.2 Վնասազերծման կազմակերպում

Վնասազերծման ենթակա թափոնները գործունեության լիցենզիա ստանալուց հետո Ընկերության կողմից համապատասխան տրանսպորտային միջոցներով տեղափոխվում են արտադրական տարածք և ընդունվում են «Ստերիլ վեյվ» ընկերության տարածքում նախատեսվող սառնարանային խցերում: Նախատեսվում է տեղադրել մեկ կամ երկու սառնարանային խուց, որոնցում կապահովվի մինուս 18°C: Այս պայմաններում թափոնները կարելի է պահեստավորել մինչև 45 օր:

Վնասազերծման արտադրողականությունը կկազմի՝

$88 \text{ կգ/ժամ} \times 8 \text{ ժամ/օր} \times 260 \text{ օր/տարի} = 183040 \text{ կգ կամ } 183.04 \text{ տ/տարի:}$

Ընդունվող թափոնների առավելագույն քանակը սահմանափակվում է սառնարանային խցերի տարողունակությամբ՝ 15 – 20 մ³: Այս ծավալը կապահովի ստերիլիզատորների առնվազն 5-օրյա աշխատանքը:



Նկար 2. Sterilwave 440 ստերիլիզատորի արտաքին պատկերը Աղյուսակ 5.1. Սարքի տեխնիկական ցուցանիշները

№	Ցուցանիշի անվանումը	Բնութագիրը
1	Մեկ վնասագերծման ցիկլի տևողությունը	0.5 ժամ
2	Խցի տարողությունը	440 լ
3	Սարքի արտաքին չափերը	2 x 1.1 x 2 մ
4	Սարքի քաշը	1400 կգ
5	Էլեկտրատեխնիկական ցուցանիշները	400 վ, եռաֆազ, 63 A
6	Տեխնոլոգիական գործընթացներ	Նախնական մանրացում պտտվող շեղբերով և տաքացում/

		ստերիլիզացում միկրոալիքային ճառագայթման եղանակով
7	Արտադրական տարածքի /սենյակի/ նվազագույն չափերը	Մակերեսը՝ 20 մ ² , բարձրությունը՝ 3.85 մ
9	Ծավալի նվազեցում	Մինչև 85 %
10	Քաշի նվազում	Մինչև 25%
11	Կշռում	Էլեկտրոնային
12	Բեռնման գործընթացը	ավտոմատ

Սարքում ախտահանվում են հետևյալ թափոնատեսակները.

- ներարկիչներ,
- հերձադանակներ և սկարիֆիկատորներ
- պոլիմերային և ռետինե կատետերներ, զոնդեր, կապեր
- արյան և լուծույթների ներակրման համակարգեր
- բամբակյա գնդեր, բինտեր, անձեռոցիկներ, վիրակապեր,
- տարբեր տեքստիլ իրեր
- պլաստիկ նյութեր և այլն:

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻԾՐԱԳԻՐ

6.1. Ռիսկերի գնահատում

Կլինիկական թափոնների սխալ գործածությունը կարող է ուղղակի կամ անուղղակի բացասական ազդեցություն ունենալ հիվանդների, առողջապահության համակարգի աշխատողների և շրջակա միջավայրի վրա: Վտանգավոր բժշկական թափոնները վտանգ են սպառնում հանրային առողջության անվտանգությանն այն դեպքում, երբ մարդիկ, այդ թվում երեխաները, շփվում են չմշակված թափոնների հետ:

6.2. Օդային ավազան

Ստերիլիզատորի շահագործման ընթացքում վնասակար նյութերի արտանետումներ չեն նախատեսվում, քանի որ ախտահանումն իրականացվում է միկրոալիքային տեխնոլոգիայով, լրիվ փակ սարքում:

Վարակազերծման արդյունավետությունը և դրա (որակի) հսկողությունը պայմանավորված է տեխնոլոգիական պարամետրերի, մասնավորապես՝ ջերմաստիճանի ապահովմամբ, ուստի կարևոր է հետևել ջերմաստիճանի ցուցանիշին, որի համար մշտադիտարկումների պլանում նախատեսված է պարամետրերի այդ թվում՝ ջերմաստիճանի չափումներ՝ ամսեկան մեկ անգամ հաճախականությամբ:

6.3. Ջրօգտագործում և ջրահեռացում

Տեխնոլոգիական գործընթացներում օգտագործվում է ջուր՝ խոնավացման նպատակով, օրական մինչև 32լ, այլ նյութեր չեն օգտագործվում:

Տեխնոլոգիական նպատակների տարեկան ջրապահանջը կկազմի՝

$32 \text{ ր/ժամ} \times 8 \text{ ժամ/օր} \times 260 \text{ օր/տարի} = 66560 \text{ ր կամ } 66.56 \text{ մ}^3/\text{տարի}:$

Անձնակազմի կենցաղային նպատակներով կօգտագործվի ջուր՝ 16 և յուրաքանչյուր աշխատողի հաշվարկով: Ըստ նախնական հաշվարկների նախատեսվում են առավելագույնը 6 աշխատող, այսպիսով՝ 96 ր/օր կամ 24.96 մ³/տարի:

Ջրամատակարարումը կկատարվի տարածքում առկա քաղաքային ջրագծից: Տարածքը, ինչպես նաև տարածքում առկա բոլոր ենթակառուցվածները պատկանում են տարածքի սեփականատիրոջը: Վերը նշված քանակներով արտադրական և կենցաղային նպատակներով ջրամատակարարումը կիրականացվի «Վեոլիա ջուր» ՓԲԸ ընկերության կողմից տրված տեխնիկական պայմանի և կնքվելիք ջրամատակարարման ջրահեռացման պայմանագրի համաձայն, որը ձեռք կբերվի համապատասխան թույլտվությունները /ՇՄԱԳ եզրակացություն և գործունեության լիցենզիա/ ստանալուց հետո:

Տեխնոլոգիական գործընթացներում արտադրական հոսքաջրեր չեն առաջանա:

Կենցաղային կեղտաջրերը կկազմեն

$96 \text{ ր/օր} \times 260 \text{ օր/տարի} = 24960 \text{ ր կամ } 24.96 \text{ մ}^3/\text{տարի}:$ Կեղտաջրերը կհանան տարածքում

առկա կոյուղու ցանցին:

6.4. Արտադրական թափոններ

Կլինիկական թափոնները վերածվում են մանր իներտ կենցաղային թափոնների, որոնք ենթակա են տեղափոխման կենցաղային աղբավայր: Ախտահանումից հետո

առաջացած թափոնի քանակը կկազմի՝ 183. 04 տ/տարի:

Փորձաքննական դրական եզրակացության դեպքում կմշակվի թափոնի անձնագիր, որը կհամաձայնեցվի ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ, որից հետո ընկերությունը կդիմի Երևանի քաղաքապետատարան տեղափոխման թույլտվության համար:

6.5. Աղմուկ և թրթռում

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N2-III-11.3՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» սանիտարական նորմերով: Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում:

Ստերիլիզատորը շահագործվում է անաղմուկ: Քանի որ ստերիլիզատորի աշխատանքը չի ուղեկցվում աղմուկի առաջացմամբ, հետևաբար հարակից տարածքների բնակչության և ստերիլիզատորը ապասարկող անձնակազմի վրա աղմուկի հնարավոր ազդեցությունը բացակայում է:

ՀՀ-ում ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ «ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԹՐԹՌՄԱՆ (ՎԻԲՐԱՑԻԱՅԻ) ՀԻԳԻԵՆԻԿ ՆՈՐՄԵՐԸ» ՀՆ N 2.2.4-009-06 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ սանիտարական նորմերով: Սույն նորմերը սահմանում են թրթռման (վիբրացիայի) դասակարգումը, նորմավորվող չափորոշիչները, աշխատատեղում թրթռման (վիբրացիայի) սահմանային թույլատրելի մակարդակները ու բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները: Սահմանային թույլատրելի մակարդակն աշխատատեղերում դա այն մակարդակն է, որը աշխատանքային գործունեության ընթացքում չի առաջացնում առողջական վիճակի շեղումներ և մասնագիտական հիվանդություններ:

Քանի որ արտադրական տարածքում բացակայում է թրթռում (վիբրացիա) առաջացնող աղբյուրը, հետևաբար ստերիլիզատորը շահագործող անձնակազմին թրթռման փոխանցումը կամ անհանգստություն պատճառելը բացառվում է:

Նորմերի կատարման հսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության մարմինների կողմից: Թրթռաարագության (վիբրոարագության) մակարդակը որոշվում է գործիքային չափման միջոցով:

6.6. Սանիտարապաշտպանիչ գոտի

Սանիտարապաշտպանիչ գոտիների չափերը սահմանվում են CH 245 – 71 ստանդարտով, սակայն նման կարգի ստերիլիզատորների համար դասակարգում այդ

ստանդարտում չկա և այդ գործունեության համար սանիտարապաշտպանիչ գոտի չի պահանջվում:

Բոլոր դեպքերում գործունեությունը նախատեսվում է կազմակերպել Շենգավիթ վարչական շրջանի արդյունաբերական տարածքում, որտեղ մոտակա բնակելի թաղամասը՝ Նորագավիթը, գտնվում է ավելի քան 1600 մ հեռավորության վրա:

6.7. Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն

Նախատեսվող գործունեությունը գործնականում չունի ազդեցություն շրջակա միջավայրի վրա, համապատասխանաբար հավաքական ազդեցություն նույնպես չի կարող լինել:

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2015 N 764-Ն որոշման:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝ ՎՏ= ՀԱԳ +

ՋԱԳ + ՕԱԳ ,

որտեղ՝

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ,

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 92-Ն որոշման համաձայն:

ՋԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշման համաձայն:

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը


հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշման համաձայն:

Ինչպես ցույց է տրվել նախորդ բաժիններում, ներկայացվող գործունեության արդյունքում չեն առաջանում վնասակար նյութերի արտանետումներ, արտադրական արտահոսքեր և այն որևէ առնչություն հողածածկի հետ չունի, ուստի տնտեսական վնասչի հաշվարկվում:

8. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՄԵՂՄԱՑՄԱՆՆ ՈՒ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

8.1. Մթնոլորտային օդ

Ստերիլիզատորները համալրված են «Hepa Filter» տեսակի զտիչներով:
Զտիչի պատկերը ներկայացված է ստորև.



Նկար 3. ՀԵՊԱ ՁՏԻՉ

Չտիչի տեխնիկական ցուցանիշները բերված են ստորև.

Աղյուսակ 8.1. Հեպա գոտիչի տեխնիկական ցուցանիշները

Չտիչի տեսակը	Չտիչի դասը	Արդյունավետությունը
EPA	E 10	≥ 85
EPA	E 11	≥ 95
EPA	E 12	≥ 99,5

Ընտրվել է E 12 տեսակի գոիչ, որի դեպքում գործնականում չկան արտանետումներ:

Զտիչի արդյունավետությունը ստուգվում է արտաքին զննումների միջոցով: Զտիչի փոխարինումը իրականացվում է այն դեպքում, երբ գոիչի գործվածքային ծածկը պատվում է մասնիկներով, սակայն ոչ ուշ քան յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ

8.2. Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսները աղտոտումից պահպանելու համար նախատեսվում է.

- ստերիլիզատորի մաքրումը կատարել չոր եղանակով, առանց ջրի օգտագործման:
- վերահսկել ջրի ծախսը ստերիլիզատորում:

8.3. Թափոններ

Ստերիլիզատորում վնասագերծման ենթակա կլինիկական և այլ օրգանական թափոնների ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- Թափոններն ընկերության տարածք տեղափոխել փակ թափքով մեքենաներով՝ ծածկված վիճակում,
- ընկերության տարածքում պահել հովացման համակարգով ապահովված սենյակում տեղադրված սառնարանային խցերում,
- թափոնների տեղափոխումը սառնարաններից ստերիլիզատոր կատարվելու է փակ տարաներով,
- վնասագերծված թափոնները դասվում են կենցաղային թափոնների շարքին, դրանք տեղափոխել կենցաղային աղբավայր /կիրականացվի փորձնական լաբորատոր հետազոտություն/

Վտանգավոր թափոնների պահպանումը կատարվելու է 2009թ. հոկտեմբերի 29-ի ՀՀ Առողջապահության նախարարի N 20-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

8.4. Կլինիկական թափոնների հավաքմանը, ժամանակավոր պահմանը ներկայացվող պահանջներ

Շրջակա միջավայրի վրա, հիվանդների և առողջապահության համակարգի աշխատողների վրա ուղղակի կամ անուղղակի բացասական ազդեցությունները կանխարգելելու նպատակով կլինիկական թափոնների գործածության համար կարևոր են հետևյալ պահանջների իրականացումը.

1. կլինիկական թափոնները հավաքվում (տարանջատվում) և պահվում են առանձին՝ ըստ տեսակների՝ բացառելով դրանց միմյանց խառնվելը:
2. Կլինիկական թափոնները՝ բացառությամբ վարակիչ միկրոկենսաբանական թափոնների և միկրոկենսաբանական հեղուկների, դրանց գոյացման վայրում անմիջապես առանձնացվում են և տեղադրվում դրանց հավաքման համար հատուկ տեղադրված և «Բժշկական վտանգավոր թափոններ» մակնշումը կրող տարողությունների մեջ:
3. Կլինիկական թափոնները՝ բացառությամբ սրածայր թափոնների և կենսաբանական հեղուկների, դրանց գոյացման տեղում տեղադրվում են դիմացկուն, անթափանց, կողքերից և հատակից արտահոսք չունեցող մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային տոպրակներում և (կամ) մեկանգամյա կամ բազմակի օգտագործման կարծր տարողությունների մեջ:
4. Բոլոր տեսակի կլինիկական թափոնները տարողությունների մեջ տեղադրվելուց հետո հերմետիկորեն փակվում են, իսկ ախտաբանաանատոմիական, միկրոկենսաբանական, սրածայր և քիմիական թափոնները նաև կնքվում, լրացվում պիտակ՝ դրա վրա նշելով տեղադրված բժշկական թափոնի տեսակը, դրա՝ տարողությունում տեղավորելու կոնկրետ ժամը, օրը, ամիսը, տարեթիվը, իր անունը և ազգանունը, ինչպես նաև կազմակերպության անվանումը:
5. Լրացված պիտակը ամրացվում է տարողությանը, որն անմիջապես տեղափոխվում է թափոնների ժամանակավոր պահման հատուկ տարածք:
6. Փակված տարողությունները կարող են բացվել միայն կլինիկական թափոնների վնասազերծման նպատակով:
7. Բեռնարկղերի մեջ տեղադրված կլինիկական թափոնների ժամանակավոր պահման համար կազմակերպությունում առանձնացվում է հատուկ տարածք:
8. Ժամանակավոր պահման հատուկ տարածքը պետք է՝ պաշտպանված լինի մթնոլորտային տեղումներից և այլ գործոնների ուղղակի ազդեցությունից՝ քամի, արևի ճառագայթներ և այլն.
9. Տարածքը պետք է ախտահանվի պարբերաբար և ապահովված լինի ջրի ծորակներով և ջրահեռացման ցանցով, պատերն ու առաստաղն ունենան անջրաթափանց ծածկույթ, տարածքի դռները ապահովեն բժշկական թափոնների բեռնարկղերն ավտոտրանսպորտի միջոցով տեղափոխելու հնարավորությունը:
10. Պետք է բացառվի կենդանիների, այդ թվում՝ միջատների և կրծողների շփումը բժշկական թափոնների հետ, ինչը ապահովելու համար պարբերաբար իրականացվում է միջատասպան (դեզինսեկցիա) և կրծողասպան (դեռատիզացիա) միջոցառումներ.
12. Ժամանակավոր պահման հատուկ տարածք կարող են մուտք գործել միայն բժշկական թափոնը հավաքելու, տեղադրելու, փակելու և տեղափոխելու պարտականություն ունեցող աշխատողները:

Կլինիկական թափոնների գործածության ծրագրով սահմանված ժամանակացույցի

կատարման նպատակով յուրաքանչյուր կազմակերպություն վարում է հատուկ մատյաններ՝ բժշկական թափոնի գոյացման տեղում և ժամանակավոր պահման հատուկ տարածքում:

9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ԱՐՏԱԿԱՐԳ և ՎԹԱՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Կլինիկական թափոնների վնասազերծումն ինքնին հանդիսանում է բնապահպանական միջոցառում: Հաշվի առնելով օգտագործվող տեխնոլոգիական լուծումները նախատեսվող գործունեությունը գործնականում չի ունենա բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա:

9.1. Արտակարգ իրավիճակներ

Հնարավոր վթարային իրավիճակների, ինչպես նաև բնական աղետների և անբարենպաստ օդերևութային պայմանների դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար մշակված է գործողությունների ծրագիր, որը ներառում է հետևյալ միջոցառումները.

- արտադրական տարածքն ապահովել հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով, հակահրդեհային վահանակներով, ինչպես նաև անվտանգության ապահովման այլ ազդանշանային սարքերով,
- էլեկտրաէներգիայի անջատման և սարքավորման տեխնոլոգիական գործընթացի խափանման դեպքում գործելու է ավտոմատ անջատիչը, Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագության նվազեցում, անհողմություն, մառախուղ) մասին հաղորդագրություն ստանալուց հետո կատարվում են հետևյալ գործողությունները (միջոցառումները).
- I կարգի վտանգի (զգուշացման) ժամանակ խստացվում է կայանքի արտադրական գործընթացների հսկողությունը,

- II կարգի վտանգի ժամանակ սահմանափակվում է ախտահանման ծավալները,
- III կարգի վտանգի ժամանակ դադարեցվում ախտահանման գործընթացը:
Անբարենպաստ օդերևույթաբանական պայմանների միջոցառումները իրականացվում են անմիջապես «Մտերիլ վեյվ» ընկերության անվտանգության պատասխանատուի կամ նրան փոխարինող անձի կողմից:

9.2. Մարդու առողջություն և անվտանգություն

Գործունեության իրականացման ընթացքում մարդու առողջությունը և անվտանգությունը պահպանելու նպատակով նախատեսվում է.

- վտանգավոր թափոնների հետ աշխատելու պատրաստվածություն,
- բավարար աշխատանքային պայմանների ապահովում հնարավոր վթարների կանխարգելում:
Աշխատակիցների աշխատանքի կազմակերպման նպատակով նախատեսվում է.
- անցկացնել համապատասխան մասնագիտական դասընթացներ՝ գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և աշխատողների մասնագիտական որակը բարձրացնելու նպատակով,
- ստուգել աշխատողների վտանգավոր նյութերի հետ աշխատելու, ինչպես նաև մասնագիտական պատրաստվածությունը,
- աշխատանքի բոլոր տեսակները՝ կապված վտանգավոր բժշկական թափոնների տեղափոխման և բեռնման հետ, հնարավորինս կատարվել հերմետիկ տարաներով,
- աշխատողների համար ապահովել համապատասխան սանիտարական պայմաններ (լվացարան, զուգարան, հանգստի սենյակ),
- աշխատավայրում պահել առաջին բուժօգնության դեղարկղիկներ՝ աշխատողներին անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար,
- բոլոր տեսակի վտանգավոր նյութերի, թափոնների տեղակայման և պահեստային սենքերի հատակները պետք է ունենան հարթ և հեշտ լվացվող մակերևույթ:
- վտանգավոր թափոնները պահվելու են հերմետիկ տարաներում սառնարանային խցերում,
- վտանգավոր թափոնների հետ աշխատող անձինք վթարային իրավիճակներում պետք է տիրապետեն ինքօգնության և փոխօգնության կանոնների:

Ընկերության կողմից նախատեսված ստերիլիզատորի աշխատանքի ապահովման ընթացքում անձնակազմը պահպանելու է 2008 թ. մարտի 4-ի՝ «ԲԺՇԿԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ» N 03-Ն հրամանի և առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

10. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Բնապահպանական կառավարման պլանը սահմանում է բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի ծրագրի՝ արտակարգ իրավիճակներում միջոցառումների պատշաճ իրականացման միջոցները: Այն ամփոփում է ակնկալվող բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, նախատեսում է մանրամասնություններ ազդեցությունների մեղմման միջոցառումների, իրականացնող մարմինների և միջոցառումների իրականացման ծախսերի վերաբերյալ /Հավելված 1/:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հիմնական հնարավոր ազդեցությունը պայմանավորված է թափոնների վնասակար հատկություններով և վնասազերծման արդյունքում հնարավոր արտանետումներով: Նախատեսվող միջոցառումները նպատակ ունեն նվազեցնելու հանրային առողջության և առողջապահական ռիսկերը, նպաստելու հիվանդությունների ավելի արդյունավետ վերահսկմանը, առողջապահական ռիսկերի կրճատմանը՝ հողի, ջրի և օդի աղտոտվածության նվազեցման միջոցով:

Կլինիկական թափոնների վնասազերծումն ինքնին հանդիսանում է բնապահպանական բաղադրիչ: Ելնելով սարքավորման տեխնոլոգիական լուծումներից և պարամետրերից նախատեսվող գործունեության ազդեցություն շրջակա միջավայրի վրա չի դիտարկվում, հնարավոր ազդեցությունների բացառումը պայմանավորված կլինի տեխնոլոգիական գործընթացի, աշխատողների անվտանգության և արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված միջոցառումների ապահովմամբ:

Ընկերության կողմից նախատեսված կլինիկական և այլ օրգանական թափոնների վնասազերծման եղանակը՝ ախտահանման և միկրոալիքային տեխնոլոգիա միջոցով շահեկանորեն տարբերվում է այրման եղանակից, քանի որ համաձայն սարքի տեխնիկական բնութագրի շրջակա միջավայրի վրա ազդեցությունը գործնականում բացակայում է:

Այդ նպատակի համար ձեռք բերվող BERTIN TECHNOLOGIES ֆրանսիական կազմակերպության (FRANCE-78180-MONTIGNY LE BRETONNEUX) արտադրության երկու ստերիլիզատորները համապատասխանում են եվրոպական «EN 61010-1 “Safety requirements for electrical equipment for measurement, control and laboratory use – Part 1: General requirements” ստանդարտի պահանջներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. СН 245 – 71. Санитарные нормы проектирования промышленных предприятий
2. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
3. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ: ЕМЕР/ЕЕА
4. “Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ” հաստատված ՀՀ Կառավարության 2005թ. հունվարի 25-ի N 91 – Ն Որոշմամբ
5. Долгосрочное прогнозирование уровня и возможных отрицательных последствий загрязнения атмосферы, Обнинск 1984г.
6. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами. Госкомгидромет, Ленинград, 1986
7. Пособие по составлению раздела проекта “Охрана окружающей природной среды ” к СНиП 1.02.01-85. Госстрой СССР, ЦНИИПРОЕКТ, Москва, 1989г.
8. РД 52.04.186-89. Руководство по контролю загрязнения атмосферы. ГК СССР по гидрометеорологии
9. Հայաստանի Ազգային Ատլաս: Երևան, 2007

Հավելված 1.

Նախատեսվող գործունեության իրականացման միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան					
№	Արտադրական գործընթացները և տեղամասերը	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման պատասխանատու	Վերահսկման եղանակը	Ծախսերը
1	Կլինիկական թափոնների ընդունում և պահեստավորում	<ul style="list-style-type: none"> - բացառել վնասազերծման ենթակա թափոնների կազմում քիմիական և դեղագործական թափոններ և դրանց ընդունումը, - հանձնող կազմակերպություններից թափոններն ընդունվելու են միայն թափոնի բնութագրի, տեսակի, ազդեցատային 	«Ստերիլվել» ՓԲԸ	Տեսչական ստուգումներ «Ստերիլվել» ՓԲԸ բնապահպանական մասնագետի	Ներառված է շահագործման ծախսերում

	<p>վիճակի, կազմի և այլնի վերաբերյալ համապատասխան նշումներով տարողություններով,</p> <ul style="list-style-type: none"> - ընկերության տարածքում թափոնները տեսակավորել և տեղադրել որակավորված մասնագետի կողմից, - սարքավորումը տեղադրել բետոնապատված տարածքում, - թափոնները կուտակել հատուկ պայմաններում /բետոնապատված տարածքներ/ հատուկ կոնտեյներների մեջ, որտեղից կբացառվի հնարավոր արտահոսքը հողային ռեսուրսներ, - վտանգավոր թափոնները պահել առանձնացված սենյակում, նախօրոք տարանջատելով ըստ թափոնատեսակի, ազրեգատային վիճակի, - կոնտեյներներից թափոների տեղափոխումը ստերիլիզատոր կատարվելու է ծածկված վիճակում, 	կողմից	
--	---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	--------	--

		<p>Վտանգավոր թափոնների պահպանումը կատարվելու է 2009թ. հոկտեմբերի 29-ի ՀՀ Առողջապահության նախարարի N 20-Ն հրամանի պահանջներին համապատասխան:</p>			
2	Ստերիլիզատորների շահագործում	<p>- ստերիլիզատորների աշխատանքային ռեժիմի, տեխնոլոգիական պայմանների և պարամետրերի ապահովում /Ժամանակահատված, ջերմաստիճան, ճնշում, սարքի աշխատանքի հաճախականություն և այլն/, - ստուգել գտիչների տեխնիկական վիճակը և մաքրման արդյունավետությունը, - անսարքության դեպքում անմիջապես անջատել ստերիլիզատորը, դադարեցվում բեռնումը, - ստերիլիզատորի սպասարկումը և շահագործումն իրականացնել միայն մասնագիտական պատրաստվածություն անցած մասնագետների կողմից, - պարբերաբար իրականացնել սարքի տեխնիկական վիճակի ստուգում, - ապահովել թափոնների անվտանգ բեռնում, մինչև հաջորդ բեռնումը ստուգել սարքի տեխնիկական պարամետրերը: - ստերիլիզատորի մաքրումը կատարել չոր եղանակով, առանց ջրի օգտագործման: - վերահսկել ջրի ծախսը ստերիլիզատորում:</p>	«Ստերիլ վեյվ» ՓԲԸ	Տեսչական ստուգումներ «Ստերիլվեյվ» ՓԲԸ բնապահպանական մասնագետի կողմից	Ներառված է շահագործման ծասերում

3	Մարդու առողջություն և անվտանգություն	<p>- անցկացնել համապատասխան մասնագիտական դասընթացներ՝ գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և աշխատողների մասնագիտական որակը բարձրացնելու նպատակով,</p> <p>- ստուգել աշխատողների վտանգավոր նյութերի հետ աշխատելու, ինչպես նաև մասնագիտական պատրաստվածությունը,</p> <p>- բացառել սորուն և ցնդող վտանգավոր բժշկական թափոնների կուտակումը և ժամանակավոր պահպանումը բաց վիճակում,</p> <p>- աշխատանքի բոլոր տեսակները՝ կապված վտանգավոր քիմիական թափոնների բարձր, տեղափոխման, բեռնաթափման և բեռնման հետ, հնարավորինս կատարվել մեքենայացված և հերմետիկացված,</p> <p>- աշխատողների համար ապահովել համապատասխան սանիտարական պայմաններ (ցնուղարան, լվացարան, զուգարան, հանգստի սենյակ),</p> <p>- աշխատավայրում պահել առաջին բուժօգնության դեղարկղիկներ՝ աշխատողներին անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար,</p> <p>- աշխատակիցներին ապահովել հատուկ, անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, հատուկ կոշիկներ, շնչադիմակ, պաշտպանիչ ակնոցներ,</p>	<p>«Ստերիլվեյվ» ՓԲԸ</p> <p>«Ստերիլվեյվ» ՓԲԸ</p>	Առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության մարմինների և «Ստերիլվեյվ» ՓԲԸ բնապահպանական մասնագետի կողմից	Ներառված է շահագործման ծասերում
---	--------------------------------------	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-------------------------------------------------	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	---------------------------------

		<p>- ստերիլիզատորի աշխատանքի վերաբերյալ վարել գրանցամատյան վտանգավոր թափոնների կառավարման միջոցառումներով,</p> <p>- ապահովել ստերիլիզատորը շահագործող անձնակազմին համար աղետակի և թրթռման /վիբրացիայի/ սանիտարական նորմերը և առաջնորդվել՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» և ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ «ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԹՐԹՈՄԱՆ (ՎԻԲՐԱՅԻՍՅԻ) ՀԻԳԻԵՆԻԿ ՆՈՐՄԵՐԸ» ՀՆ N 2.2.4-009-06 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ սանիտարական նորմերով:</p>			
--	--	-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	--	--	--

		<p>նյութերի, թափոնների տեղակայման և պահեստային սենքերի հատակները պետք է ունենան հարթ և հեշտ լվացվող մակերևույթ:</p> <ul style="list-style-type: none"> - վտանգավոր թափոնները պահվելու են հերմետիկ տարաներում և փակ սենքերում, բացառելով կողմնակի մարդկանց մուտքը, - վտանգավոր քիմիական թափոնների հետ աշխատող անձինք վթարային իրավիճակներում պետք է տիրապետեն ինքօգնության և փոխօգնության կանոնների: - Ընկերության կողմից նախատեսված ստերիլիզատորի աշխատանքի ընթացքում անձնակազմը պահպանելու է 2008 թ. մարտի 4-ի՝ «ԲԺՇԿԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ» N 03-Ն հրամանի և առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: 			
--	--	-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	--	--	--

Հավելված 2. Մոնիթորինգի (մշտադիտարկում) պլան

Մոնիթորինգի առարկան և եղանակը	Պարբերականությունը /Ժամանակամիջոցը/	Պատասխանատու	Գումարը դրամ/հազ./
- Ստերիլիզատորների փորձարկման փուլում կազմակերպել ախտահանված կլինիկական փաթոնների նմուշառում և անալիզ	Միանգամյա	«Ստերիլվեյվ» ՓԲԸ լիցենզավորված լաբորատորիայի միջոցով	80.0 հազ.ՀՀ դրամ
- ստուգել ստերիլիզատորների տեխնոլոգիական պարամետրերը /ջերմաստիճան, ճնշում/, - ստուգել գոխիչների տեխնիկական վիճակը և արդյունավետությունը,	Ամիսը 1 անգամ	«Ստերիլվեյվ» ՓԲԸ	50.0 հազ.ՀՀ դրամ
Թափոնների պահեստների, գրանցամատյանների վարում, ստուգում: Մակնշված տարաներով թափոնների ընդունում, նմուշառումների ստուգում, տեսակավորում:	Օրական Ըստ թափոնների ընդունման հաճախականության	«Ստերիլվեյվ» ՓԲԸ	Կներառվի շահագործման աշխատանքների արժեքում
Աշխատողների աշխատանքային և սանիտարական պայմանների ստուգում	Ամենօրյա	«Ստերիլվեյվ» ՓԲԸ	Ներառված է շահագործման ծախսերում



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱԿԱՆ ԱԶԳԱՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՅԳԻՍՏԻ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՑԱԿԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՍՑԱՆԻՑ ԹԱԿՎԱԾՔ ԿՈԸ 2022-06-10

«ԱՏԵՐԻԼՎԵՅՎ»

Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)

Գրանցման համար 273.120.1243417

Հիմնադրման տարի 2022

Գրանցման ամսաթիվ 2022-06-10

Գործունեության ժամկետ **Անժամկետ**

Կարգավիճակ **Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական փաստաթուղթի հիման վրա գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:**

Իրավաբանական անձի ծանկագիր (ՁԿԴ) 53308397

Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) 02866703

Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովարդի ծանկագիր) 46123417

Էլ. փոստ -

Կայք -

Գտնվելու վայրը

Հասցե **ՍԱՅԱՌ-ՆՈՎԱՅԻ Փ. / Շ / 12 / 21 ԲՆ, ԿԵՆՏՐՈՆ 0001
ԵՐԵՎԱՆ, ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ**

Հեռախոս -

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն **Տնօրեն**

Անուն Ազգանուն **ԼԻՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈՎԻԿԻ**

Անձնագրային տվյալներ **002636892 2015-05-12 011**

Հասցե **ՍԱՅԱՌ-ՆՈՎԱՅԻ Փ. / Շ / 12 / 21 ԲՆ, ԿԵՆՏՐՈՆ 0001
ԵՐԵՎԱՆ, ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 6 հուլիսի 2005 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ԿԱԹՍԱԷՆԵՐԳՈՄՈՆՏԱԺ» ԲԲԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Շենգավիթ Արցախի պողոտա 4/50

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ

Սեփականաշնորհման պայմանագիր 08.09.1997թ. թիվ 696-2, Համայնքի ղեկավարի որոշում 04.02.2005թ. թիվ 147-Ա, 01.01.1997թ. հաշվեկշռային տեղեկանք

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-011-0521-0004

Մակերեսի չափը (հա)՝ 0.8869

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արդյունաբերական օբյեկտների

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 30072021-01-0340, գաղտնաբառ՝ GUDIS3UTBRPW

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ արտադրական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	01-011-0521-0004-001	Պահակատուն	22.6 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	01-011-0521-0004-002	Արհեստանոց	83.7 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
3	01-011-0521-0004-003	Արտադրամաս	1206 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
4	01-011-0521-0004-004	Շինություն	32 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
5	01-011-0521-0004-005	Շինություն	13.8 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
6	01-011-0521-0004-006	Շինություն	19.7 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
7	01-011-0521-0004-007	Շինություն	14.8 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
8	01-011-0521-0004-008	Գրասենյակ	235.2 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
9	01-011-0521-0004-009	Շինություն	9.7 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
10	01-011-0521-0004-010	Պահեստ	135.19 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Հոդամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է 04.10.2005թ. N199-Ն ՀՀ օրենքի 23-րդ /ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ/ հոդվածի պահանջների համաձայն պայմանով՝ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը ներկայացնելու դեպքում: Սույն վկայականը հանդիսանում է 06.07.2005թ. թիվ 1754364 վկայականի նոր նմուշի տարբերակը:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՀՐԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱՎԱՆ N 30072021-01-0340, գաղտնաբառ՝ GUDIS3UTBRPW


Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2



Կադաստրի
կոմիտե

Երևան քաղաք
Շենքավիթ վարչական շրջան
Հատված կադաստրային քարտեզից
կադաստրային ծածկագիր՝ 01-011-0521-0004
Մասշտաբ 1: 500



Կադաստրի
կոմիտե

